

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ԽԱՉԻ ՏԵՂԱԴՐՄԱՄԲ

Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի մի խումբ գործարարների նախաձեռնությամբ 2012 թվականից հոկտեմբերի 7-ը հայտարարվել էր Հացառատի օր, որը նշվել էր համահացառատյան տոնախմբությամբ եւ Հայոց բանակի շարքերում մարտական ծառայության ժամանակ զոհված հացառատցիներին նվիրված հուշահամալիրի կառուցմամբ: Այս տարի Հացառատի օրը թաղամասում նշանավորվեց գերեզմանոցի բարձուքում տեղադրված 6 մետր բարձրության պողպատակուռ խաչի բացման եւ օձման արարողությամբ: Խաչի բացման եւ օձման արարողությանը մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը, Գավառի տարածքի համայնքների ղեկավարները, Գավառի զինկոմ Խաժակ Սուլյանը, Հացառատ թաղամասի բնակիչներ: Նորաբաց խաչի օրհույան կարգը կատարեց Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը: 'Այս Խաչը թող լինի հացառատցիներին ու հայ ժողովրդի բոլոր զավակներին միավորող, համախմբող զորություն, տունդարձի կանչ',- իր ելույթում նշեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Միջոցառումը շարունակվեց Արցախյան ազատամարտում եւ Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս զոհված հացառատցիների հուշահամալիրի մոտ: